



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ
ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., 2-1, Հեռ.
(098)048046, tumanyan.iori@mta.gov.am

N 88
27 փետրվար 2018թ.

**ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ավագանու 2018թվականի փետրվարի 21-ի թիվ 5-Ա - 8-Ա, 9-Ն և 10-Ն որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

**Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր ՝
Չ Ա Վ Ա Ր Յ Ա Ն**

Լ Ե Վ Ո Ն

Կար. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 5-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության . օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի նիստի օրակարգը.

1. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2018 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՐՈՒՅ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ Գ. ԼՈՐՈՒՏ, 15-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09295 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ 868,74 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ԱՆԱՍՆԱԳՈՄԸ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ «ՔԱՐԱԼԱՆՋ» ՏԵՂԱՄԱՍԻ ԲՈՐԲՈԹԻ ԴԻԱԲԱՋԱՅԻՆ ՊՈՐՖԻՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒՇՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

2. ԳԱԼՍՅԱՆ ԳՈՐ


3. ԽՆՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

4. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԻՆԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

6. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵԿՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 6-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ. ԼՈՐՈՒՏ, 15-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09295 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ 868,74 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ԱՆԱՄՆԱԳՈՄԸ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ
ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
21-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Լորուտ, 15-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող արտադրական նշանակության 0,09295 հա մակերեսով հողամասի վրա կառուցված 868,74 քմ մակերեսով կիսաքանդ շինությունը (անասնաշենքը) տրամադրել վարձակալության:
2. Հաջորդ ավագանու նիստին ներկայացնել օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրման համապատասխան որոշման նախագիծը:

Կողմ -4

Դեմ -2

Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

1. ԽԵՂՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ


2. ԳԱԼՍՅԱՆ ԳՈՌ

2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵԿՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 7-Ա

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՔՆՔԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ «ՔԱՐԱԼԱՆՋ» ՏԵՂԱՄԱՍԻ ԲՈՐԲՈԹԻ ԴԻԱԲԱԶԱՅԻՆ ՊՈՐՖԻՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի, 42-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի Մարց գյուղում 2018թ. փետրվարի 16-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը և ԱՁ Դավիթ Փարեմուզյանի դիմումը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Տալ նախնական համաձայնություն անհատ ձեռներեց Դավիթ Փարեմուզյանին՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Մարց գյուղի «Քարալանջ» տեղամասի Բորբոթի դիաբազային պրոֆիրիտների հանքավայրի շահագործման աշխատանքները սահմանված կարգով իրականացնելու համար:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -1

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

1. ՄԵՍԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ


2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՒ

3. ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

4. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ՝



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ Ի ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ Ի ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ա որոշումը:

Կողմ -7

Դեմ -1

Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

2. ԳԱԼՍՅԱՆ ԳՈՐ

3. ԽԵԶՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ


4. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

7. ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

- 1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.
- 2) համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, մշակութային կյանքի խթանումը.
- 3) համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը.
- 4) զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.
- 5) միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

- 1) միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- 2) աջակցություն են ցուցաբերում համայնքի մարզիկներին և մարզական թիմերին՝ ներհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև միջհամայնքային, մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերին նրանց մասնակցության ուղղությամբ.
- 3) աջակցություն են ցուցաբերում համայնքի մշակութային հաստատություններին՝ մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներին մասնակցելու իրականացմանը.
- 4) նպաստում են համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության կազմակերպմանը.
- 5) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով կարող են նախատեսվել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 2%-ը:

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքերում:

6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը համապատասխան փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

10. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին:

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

11. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

12. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ղեկավարը գոհված զինձառայողների, զինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Համայնքի սոցիալապես անապահով քնակչի հուղարկավորության կազմակերպման համար օգնության տրամադրման համար համայնքի ղեկավարը իր որոշմամբ նրա ընտանիքին հատկացնում է մինչև 30000 դրամի սոցիալական օգնություն և այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանուն առաջիկա նիստում, որը ավագանու կողմից ընդունվում է որպես ի գիտություն:

15. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

16. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

17. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1) սոցիալապես անապահով ընտանիք հանդիսանալու վերաբերյալ սոցիալական օգնության տրամադրման մշտական գործող հանձնաժողովի դրական եզրակացությունը:

2) սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի քյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը:

3) ընտանիքի եկամտի չափը ընտանիքի անդամի հաշվով 55000 դրամը չգերազանցելը.


4) համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն չվարելը:

18. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է մինչև 20000 դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 1 անգամ: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց ընտանիքի անդամներին:

19. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից « օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում են միայն ավագանու որոշմամբ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 9-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿՐՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱԿԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 156-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

- 1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
- 2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:


Կողմ -8


Դեմ -0


Ձեռնպահ -0


1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ 


2. ԳԱԼՍՅԱՆ ԳՈՒ 


3. ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ 

4. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ 


5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ 

6. ՇԱԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ 

7. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ 

8. ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵԿՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ
ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ
ԷՌԻԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի (այսուհետ՝ համայնք) վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների, անհատական բնակելի տների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման (նաև լվացման) և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար բարեկարգումը և մաքրումը, մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) շենքերի և շինությունների հարակից բակային տարածքների պարբերաբար բարեկարգումը և մաքրումը,

4) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում,

5) անշարժ գույքի մուտքի լուսավորության ապահովումը,

6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմանը համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կամ նրա լիազորած անձի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ - սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Թումանյանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարանի) համապատասխան մասնագետի կողմից:

10. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և վերանորոգումը իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Պետական լիազոր մարմնի կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

11. Համայնքապետարանի համապատասխան մասնագետի և **վարչական ղեկավարի** կողմից կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի, շինության ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

12. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը, մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն,

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո,

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

13. Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և (կամ) տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

14. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն համայնքապետարանի կողմից տրված ֆիտոնախագծի համաձայն:

15. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, սույն կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

17. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

18. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

19. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց

զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 5-10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:


20. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի **տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:**

21. Մինչև վարչական տուգանքի նշանակումը համայնքի ղեկավարը անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին տալիս է ծանուցագիր – զգուշացում նրա տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման մասին՝ նշելով իրականացվելիք բարեկարգման աշխատանքները և ժամկետը, որը չի կարող գերազանցել **30 օրը:**

22. Անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին բարեկարգման աշխատանքները կատարելու համար տրված ժամկետի ավարտից հետո, եթե այդ աշխատանքները չեն իրականացվել համայնքի ղեկավարի կողմից տուգանքի նշանակումը պարտադիր է:

23. Բարեկարգման աշխատանքները չկատարելու համար նշանակված և գանձված վարչական տուգանքներից առաջացած գումարները համայնքի ղեկավարը օգտագործում է միայն համայնքում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԳԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 10-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 26-ի «Թումանյան համայնքի 2018թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -2

Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

1. ԽԵՂՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՐ

2. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

3. ՄԻԽԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

6. ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Թումանյան համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ գումարով 9274,028 հազ. դրամ ուղղել համայնքի ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներին:

2. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից նախատեսել 884.150 հազ. դրամ մուտք:

3. Բյուջեի ընթացիկ ծախսերում կատարվող փոփոխությունները ըստ ոլորտների.

1) Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Ճանապարհային տրանսպորտ.

Նախատեսել ճանապարհային տրանսպորտի գծով ընթացիկ ծախսեր դրամաշնորհների տեսքով 5000.0 հազ. դրամ,

2) Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Թումանյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման նպատակով նախատեսված ընթացիկ ծախսերը պակասեցնել 8000.0 հազ. դրամով,

3) Բաժին (Ոլորտ) 6. Բնակավարանային շինարարություն և կոմունալ ծառայություն.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Նախատեսել ջրամատակարարման գծով ընթացիկ ծախսեր դրամաշնորհների տեսքով 3000.0 հազ. դրամ,

4) Բաժին (Ոլորտ) 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր.

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերը ավելացնել 1459.0 հազ. դրամով, պակասեցնելով պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նույն գումարի չափով:

4. Կապիտալ ծրագրերում կատարվող փոփոխությունը ըստ ոլորտների.

1) Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ.

Համայնքապետարանի աշխատանքային պայմանների բարելավման նպատակով ավելացնել <<Սեքենաներ և սարքավորումներ>> ձեռք բերելու համար 5000,0 հազ. դրամ ծախս,


2) Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ.

Քարինջ բնակավայրի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման համար ավելացնել 3700,0 հազ. դրամ ծախս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ